

Հաստատված է  
ԵՊՀ գիտական խորհրդի  
2012 թ. ապրիլի 20-ի նիստում  
ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ  
Ա. Ն. Սիմոնյան  
«20» ապրիլի, 2012թ.

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

### ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ Երևանի պետական համալսարանի որակի ապահովման մշտական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԵՊՀ կանոնադրությանը, ԵՊՀ ներքին իրավական ակտերին և սույն աշխատակարգին համապատասխան:
2. Հանձնաժողովի գործունեության նպատակն իր կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանց վերաբերյալ գիտական խորհրդին առաջարկությունների ներկայացումն է:
3. Հանձնաժողովն իր ոլորտին վերաբերող հարցերը քննարկում է ԵՊՀ գիտական խորհրդի և/կամ ռեկտորի հանձնարարությամբ:
4. Հանձնաժողովի գործունեության ժամկետի և կազմի հաստատումը, ինչպես նաև դրանց փոփոխություններն իրականացվում է ԵՊՀ գիտական խորհրդի կողմից:

#### II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Հանձնաժողովի գործառույթներն են.
  - 1) մշակել ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը ենթակա որակի ներքին և արտաքին ապահովման ոլորտի իրավական ակտերի նախագծերը,

- 2) տալ ԵՊՀ որակի ներքին ապահովման ոլորտին առնչվող չափորոշիչների, գործընթացների և/կամ ընթացակարգերի կիրարկման, նոր և վերանայված կրթական ծրագրերի հաստատման վերաբերյալ երաշխավորություններ և առաջարկներ,
- 3) համագործակցել ԵՊՀ որակի ապահովման այլ կառույցների ու խմբերի հետ,
- 4) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և ԵՊՀ ներքին իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

### **III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

6. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Հանձնաժողովի առաջին նիստը հրավիրում է ռեկտորը, որի ընթացքում ընտրվում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի հաջորդ նիստերը հրավիրում է հանձնաժողովի նախագահը:
7. Հանձնաժողովի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հանձնաժողովում որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք:
8. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է նրա կողմից նշանակված հանձնաժողովի անդամը:
9. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվող օրակարգով:

### **IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ**

10. Հանձնաժողովի նախագահը՝
  - 1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը,
  - 2) համակարգում է հանձնաժողովի որոշումների ընդունման գործընթացը,
  - 3) առանձին հարցերի քննարկման նպատակով հրավիրում է համապատասխան մասնագետների և փորձագետների,
  - 4) ԵՊՀ գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված նախագծերը,

5) իրականացնում է ԵՊՀ ներքին իրավական ակտերով և սույն աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ:

## V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

11. Հանձնաժողովի անդամը՝

- 1) մասնակցում է հանձնաժողովում բարձրացված հարցերի վերաբերյալ քննարկումներին,
- 2) հանձնաժողովում անցկացված քննարկումների հիման վրա քվեարկությունների միջոցով մասնակցում է որոշումների ընդունմանը,
- 3) հանձնաժողովի որոշմամբ ԵՊՀ գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված նախագծերը,
- 4) իրականացնում է ԵՊՀ ներքին իրավական ակտերով և սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

12. Հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ հանձնաժողովի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել ԵՊՀ գիտական խորհրդի նիստում: